ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կրթության և գիտության նախարարության «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ն, «Կրթության բարելավում» ծրագրի շրջանակներում շինարար ճարտարագետի ընտրության մրցույթ

ՀՀ Կրթության և գիտության նախարարության «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ն, «Կրթության բարելավում» ծրագրի շրջանակներում հայտարարում է մրցույթ՝ շինարար ճարտարագետի ընտրելու համար: Խորհրդատվական ծառայությունը կիրականացվի 2016-2019 թվականների Ժամանակահատվածում: Պայմանագիրը կկնքվի տարեկան կտրվածքով՝ յուրաքանչյուր տարվա աշխատանքների պատշաճ կատարման պայմանով:
Խորհրդատվական ծառայությունը ներառում է հետևյալ աշխատանքները.

- Ապահովել ԿԾԿ-ի և շինարարական աշխատանքների հետ կապված խորհրդատուների (կազմակերպություններ և անհատներ), ինչպես նաև համապատասխան փաստաթղթեր տրամադրող կառույցների միջև աշխատանքների համակարգումը,
- Ծանոթանալ շինարարական աշխատանքների ուղղությամբ Համաշխարհային բանկի ընթացակարգերին,
- Ծանոթանալ շինարարական աշխատանքների հետ առնչվող բնապահպանական և սոցիալական պահանջներին, որոնք ամրագրված են Ծրագրի բնապահպանական և սոցիալական կառավարման պլաններում,
- Աջակցել համապատասխան գնումների փաստաթղթերի մշակման և հայտերի գնահատման աշխատանքներին,
- Մասնակցել հիմնանորոգվող տարածքների նախնական, միջանկյալ և հիմնանորոգումից հետո անցկացվող ուսումնասիրություններին,
- Աջակցել ԿԾԿ Ենթաբաղադրիչ 1.2-ի աշխատակազմին՝ հիմնանորոգման աշխատանքների վերահսկման աշխատանքներում,
- Ապահովի հիմնանորոգման աշխատանքների իրականացման համապատասխանությունը սահմանված նորմերին և ընթացակարգերին, անհրաժեշտության դեպքում ներկայացնել հատուկ կարծիք,
- Մասնակցել հիմնանորոգման գործընթացի կառավարման և համակարգման աշխատանքներին,
- Վերահսկել հիմնանորոգման աշխատանքների հետ կապված խորհրդատուների ու կապալառուների կողմից կատարված աշխատանքների որակը,
- Իր գործառույթների շրջանակներում գնահատել առաջացած խնդիրները և ներկայացնել առաջարկություններ դրանց արդյունավետ լուծման ուղղությամբ,
- Դիտարկել նախագծերը և վերահսկել կատարվող աշխատանքները,
- Ապահովել Ծրագրի շրջանակներում հիմնանորոգման աշխատանքների ժամանակին և արդյունավետ կատարումը,
- Համակարգել հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողությունը՝ ապահովելով կատարված աշխատանքների համապատասխանությունը ՀՀ շինարարական նորմերին և պահանջներին,
- Համակարգել Ծրագրի բնապահպանական և սոցիալական կառավարման պլաններին (ԲՍԿՊ) վերաբերող գործողությունները,
- Հիմնանորոգման աշխատանքների ընթացքում ստուգել բնապահպանական և սոցիալական երաշխիքների համապատասխանությունը, և պարբերաբար ներկայացնել լրացված երաշխիքների համապատասխանության ձևը, որը ներառված է Ծրագրի ԲՍԿՊ-ում որպես հավելված:

- Անհրաժեշտության դեպքում տրամադրել առաջարկություններ նախագծերում փոփոխություն կատարելու վերաբերյալ,
- Դիտարկել խորհրդատվական կազմակերպությունների կողմից ներկայացված տեխնիկական հսկողության և հեղինակային հսկողության վերաբերյալ հաշվետվությունները, և տրամադրել համապատասխան եզրակացություն կատարված աշխատանքների վերաբերյալ: Խնդիրների հայտնաբերման պարագայում՝ ապահովել առաջարկություններ դրանց վերացման/լուծման ուղղությամբ,
- Վերահսկել ծրագրի իրականացման աշխատանքները հիմնանորոգվող օբյեկտներ պարբերական այցերի միջոցով՝ սերտ համագործակցելով Մարզային կառույցների հետ,
- Յուրաքանչյուր ամիս պատրաստել ընթացիկ հաշվետվություններ, հիմնվելով օբյեկտներում իրականացված աշխատանքների ստուգումների վրա, ներառելով լուսանկարչական նյութերի տրամադրումը, մանրամասն տեղեկատվություն նախագծված, ավարտված և մնացած աշխատանքների վերաբերյալ, ներկայացնել դրանք Ենթաբաղադրիչ 1.2-ի ղեկավարին,
- Պատրաստել վերջնական հաշվետվություններ ծրագրի ընդունման ընթացքում, ներկայացնել դրանք Ենթաբաղադրիչ 1.2-ի ղեկավարին,
- Իր ուղղակի պարտականություններից բացի, անհրաժեշտության դեպքում, կատարել Ենթաբաղադրիչ 1.2-ի ղեկավարի կողմից տրված այլ հանձնարարություններ:

Թեկնածուներին ներկայացվող նվազագույն որակավորման պահանջներն են.

- Խորհրդատուի որակավորումը.
  - Բարձրագույն կրթություն քաղաքաշինության ճարտարագետի կամ ճարտարապետի մասնագիտացմամբ (սերտիֆիկացված դիպլոմը պահանջվում է),
  - Պետական և միջազգային ծրագրերի համար գնումների ընթացակարգերի ոլորտում փորձ. Համաշխարհային բանկի ծրագրերի փորձը կդիտվի որպես առավելություն:
  - Հիմնանորոգման/շինարարության վերաբերյալ ՀՀ գործող նորմերի ու իրավական ակտերի իմացություն,
  - Նորմատիվ փաստաթղթերի հետ աշխատելու կարողություն,
  - Համակարգչային սարքավորումների կիրառության բավարար հմտություններ:
- Ընդհանուր աշխատանքային փորձը.
  - Առնվազն հինգ տարվա աշխատանքային փորձ հանրային կառավարման (կենտրոնական և տեղական) շինարարական ծրագրերի նախագծման, իրականացման և ղեկավարման ոլորտում, ցանկալի է միջազգային հաստատություններից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում (գործատուների վերաբերյալ տեղեկատվությունը պահանջվում է)..,
- Աշխատանքային փորձի համապատասխանությունը ոլորտում.
  - Հիմնանորոգման/շինարարական աշխատանքների փորձ և դրանց իրականացման մասնագիտական փորձառություն,
- ➢ Գերազանց կազմակերպչական և հաղորդակցական հմտություններ:

  Թեկնածուները մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ:

Անհատ խորհրդատուները կգնահատվեն հետևյալ կերպ.

- Խորհրդատուի որակավորումը -30 միավոր,
- Ընդհանուր աշխատանքային փորձը - 30 միավոր,
- Աշխատանքային փորձի համապատասխանությունը ոլորտում - 40 միավոր:

Դիմող թեկնածուները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

- Նամակ-դիմում (կցվում է), որտեղ պետք է նշեն մրցույթին մասնակցելու իրենց ցանկության մասին,

- Ինքնակենսագրական տվյալները (CV), որը պետք է պարունակի դիմողի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները՝ անունը, ազգանունը, ծննդյան թիվը, կրթությունը, մասնագիտությունը, մանրամասն աշխատանքային փորձը,
- Կրթությունը հիմնավորող փաստաթղթեր:

Հետաքրքրված անհատ խորհրդատուներին խնդրում ենք հատուկ ուշադրություն դարձնել «Համաշխարհային բանկի վարկառուների կողմից Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի փոխառություններով և Միջազգային Զարգացման Ընկերակցության վարկերով խորհրդատուների ընտրության և վարձման ուղեցույցի» (2011 թ. հունվար) պարբերություն 1.9-ին, որտեղ շարադրված է Համաշխարհային բանկի քաղաքականությունը շահերի բախման վերաբերյալ:

Անհատ խորհրդատուի ընտրությունը կիրականացվի համաձայն ՀԲ-ի խորհրդատուների ընտրության և վարձման ուղեցույցում սահմանված «Անհատ խորհրդատուների ընտրություն» մեթոդի:

Համապատասխան փորձ ունեցող մասնագետները կարող են դիմել «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ՝ ք. Երևան, Ս. Վրացյան փող. 73 հասցեով, (էլ. փոստ. cfep@arminco.com) մինչև օգոստոսի 26, 2016թ., ժամը 17:00-ն:
Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք դիմել վերոհիշյալ հասցեով կամ (010)57-56-90 հեռախոսահամարով:

«Կրթական ծրագրերի կենտրոն»

ծրագրերի իրականացման գրասենյակ ՊՀ

Հայաստանի Հանրապետություն, Երևան, Վրացյան 73

Դիմող՝ _____

_____

_____

Դիմում

Սույնով ցանկություն եմ հայտնում մասնակցել

_____

_____

_____:

Կից ներկայացնում եմ տվյալներ իմ աշխատանքային փորձի և կրթության մասին:

Դիմող՝ _____ /_____/

«____» _____ 2016 թ.